

Սիրելի Մելգոնեանցիներ եւ Մելգոնեանի Բարեկամներ,

Անմահ բարերարներ Կարապետ եւ Գրիգոր Մելգոնեան եղբայրներու նուիրում այս յիշատակի հանդիսութեան բաբի եկած էր:

Ինչպէս գիտէք Մելգոնեան եղբայրներու կտակով էր որ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը բացուած էր 1926 թուականին, եւ 1925 թուականի համաձայնութեամբ կնքուած Կարապետ Մելգոնեանի, Պոլսոյ Պատրիարքարանի եւ ՀԲԸՄ-ի միջեւ, Մելգոնեանը յանձնուեցաւ ՀԲԸՄ-ին:

1924-ին, Պոլսու Պատրիարքութիւնը յայտարարած էր որ ինք կարող չէր Մելգոնեանի կտակը իրագործելու:

Ինչպէս կը յիշէր, Մարտ 16, 2004-ին, ՀԲԸՄ-ի որոշումով յայտարարուեցաւ թէ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը պիտի փակուի Յունիս 2005 թուականին:

Խումբ մը Մելգոնեանցիներ, Ապրիլ 2004-ին հիմնեցինք Melkonian Alumni and Friends ոչ-շահաբեր կազմակերպութիւնը, որուն կարելոք նպատակներէն մին է դէմ կենալ եւ կասեցնել ծրագրուած փակումը մեզի ամենուս սիրելի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը:

Հաստատութիւնը պահպանելու բոլոր կողերը հանրութեան եւ անհատներու կողմէ անտեսուած են ՀԲԸՄ-ի Կեդրոնական Նոգաբարձութեան (Central Board) կողմէ:

Melkonian Alumni and Friends –ի վարչութեան երկու անդամները եւ իրաւաբան Marc Mac Carley Դեկտեմբեր 2004-ին Պոլսոյ Պատրիարքարանի հաղորդակցութեան ընդլայնուած շեշտով այցելեցին Պոլիս, Թուրքիա:

- **Հանդիպումը արդիւնաւորուեցաւ միացեալ համաձայնութեամբ:**

Յունուար 13, 2005-ին Գալիֆորնիոյ Բարձրագոյն Ատեանին մէջ (Superior Court of the State of California), Պոլսոյ Պատրիարքարանը դատի քաշեց Հ. Բ. Ը. Միութիւնը, որպէսզի Մելգոնեան եղբայրներու կտակը լիովին գործադրուի:

Արդէն 78 տարի անցած է Մելգոնեան դպրոցի հիմնումէն եւ Մելգոնեանը ունի հազառէ աւելի շրջանաւարտներ: Հոս կը մէջբերենք Կարապետ Մելգոնեանի մէկ խօսքը:

«Կը փափաքիմ որ Մելգոնեան Կրթական այս հաստատութիւնը՝ տեւէ դարէ դար - - -»

Կը մաղթենք որ 2005 թուական մեզի բերէ խաղաղութիւն եւ համաձայնութիւն: